Ա. ՏԱՐԻ — (14/27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903. — ՌՈՒՍՋՈՒՔ). — Թիւ 18

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

Հասցէ՝
Rédaction du journal
„VERADZNOUTIOUN"
ROUSTCHOUK (Bulgarie)

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱՄԷՆ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք, վեցամսեայ 5 Ֆրանք։

Հասցէ՝
Редакция на вѣстникъ
„ВЕРАДЗНУТЮНЪ"
РУСЕ

ՑԱՐԻԶՄԸ

Սպիտակ Սուլթանի վերջին բաշիբօզուկութիւնը. — Հայոց եկեղեցական կալուածների գրաւումը, — իր ճչակից դուրս գալով՝ հայ ժողովրդին ևս ստիպեց իր համբերութեան սահմանից դուրս գալ։ Եւ եկաւ։ Նա չը բաւականացաւ իր բուռն բողոքը արտայայտել միմիայն ագերսագրերով, բողոքագրերով և դէս-դէն պատւիրակներ ուղարկելով։ Ի՞նչ են բողոքագրերը, աղաչանք-պաղատանքները. — Թղթե՛ր, որոնք երբե՛ք չեն կարող վերջ դնել լըրբացած կառավարութեան այլ՝ առաւել կամ նուազ՝ հարստահարութիւններին, սանձարձակութիւններին։ Թղթե՛ր, որոնք երբե՛ք չեն կարող հանդիսանալ պատնէշներ, խանգարանքներ ռուսական սուր քաղաքականութեան դէմ։ Թղթե՛ր, որոնք երբե՛ք չեն կարող հանդիսանալ իբրև ազդակներ բռնութեան անկման գործի։ Թղթե՛ր, վերջապէս, որոնք ճնշուած, ստրկութեան աստիճանի հասած ժողովրդին երբե՛ք չեն կարող ցանկալի կեանք, ազատ կեանք, բարօրութիւն ու հանգստութիւն շնորհել։ Ա՜հ, այդ թղթի կտորները անզօր են տապալելու այն զզուելի կառավարութիւնը, գահավիժել դէպի խոր անդունդ այն սոսկալի բռնապետութիւնը, ինչպիսին է Ցարիզմը, որ «Մայր է ամենայն չարեաց»։ Այդ թղթերով, առաւել ևս, չը բաւականացաւ դժգոհ ժողովուրդը։ Նա, ամբոխը, կամ որ աւելի դժգոհ տարրը, մի քիչ առաջ գնալով ձեռնամուխ եղաւ համեմատաբար գործնական միջոցների՝ իր բողոքը յայտնելու Ցարի վերջին յափշտակութեան դէմ։

Այդ միջոցները ժողովրդային, մասսայական հակակառավարական ցոյցերն են։ Դրանք զանազան ագերսագրերից ու բողոքագրերից շատ աւելի դրական և միանգամայն նպատակայարմար են, թէև դժուարին, բայց և փոքրիկ զոհեր պահանջող։ Դրանք աւելի կրթիչ են, աւելի զարթեցնող ամբոխին՝ բողոքելու, ընդվզելու մէջ։ Դրանք, այդպիսով, հանդիսանում են պրօպագանդաներ՝ մեծ և լայն չափերով ազատութեան փրկարար Գաղափարի։ Դրանք են, վերջապէս, բռնութիւնը՝ տիրանիան տապալող մեծ գործի առաջին աստիճանները... ազատ կեանքի նախընթաց օրը...

Եւ վերոյիշեալ նպատակայարմար միջոցներից մէկը գործադրուեցաւ Բագւում — եկեղեցական կալուածների առթիւ, որի մասին մեզ ամսոյս 4-ին Բագուից գրած մի նամակից աւելորդ չի լինի այստեղ ներկայացնել ընթերցողին հարկաւոր քաղուածքներ։ Ահա նրանք. «Ամսոյս 2/15 ին լուր տարածուեց թէ Բագւի եկեղեցու կալուածները և գանձարանը պիտի յանձնւի կառավարութեանը։ Հետևեալ առաւօտեան 9 ժամից մարդիկ սկսեցին ամէն կողմից հաւաքուել եկեղեցու մօտ և պատրաստ դրութեան մէջ սպասում էին։ Ցոյցը պիտի սկսւէր ժամը 12-ին։ Սակայն կառավարութեան կողմից ոչ մի ընդդիմութիւն կամ առարկութիւն չեղաւ հաւաքուած ահագին բազմութեան նկատմամբ։ Ամբոխը, լցուած փողոցներում՝ «Պարապետ» կոչուած հրապարակի վըրայ և եկեղեցու սրահում, սպասեց մինչ յերեկոյեան 7 ժամը։ Յանկարծ ոստիկանները յարձակւեցին ամբոխի վրայ։ Դա եղաւ նշանը ցոյցը սկսելու։ Ամբոխը ատրճանակներ արձակելով ոստիկաններին ստիպեց փախուստի դիմել։ Ուրիշ 2 ժամ եկեղեցուն ոչ ոք չէր կարող մօտենալ։ Ժամի 9-ին զօրքը շրջապատելով եկեղեցին սկսեց հրացանաձգութիւնը դէպի այդ կողմը։ Ժողովուրդը ցրուեց։ Երևան եկան 4 հոգի սպանուածներ, 6 վիրաւորուած և ձերբակալուեցին 30 հոգի։ Եկեղեցին պաշարուած դրութեան մէջ է։ Մեծ քանակութեամբ զօրք կայ։ Ցուցարարներին օգնում էին և Պարսիկները...։

Ահա՛, ընթերցող, թէ ո՞ր աստիճանի է հասել Ցարի սանձարձակութիւնը, ահա թէ որքան հրէշաւոր է այն կառավարութիւնը, որի վրայ այսօր ծանրացած է 300,000 անմեղ զոհերի արեան մեղսակցութիւնը, որը այնքան վնասներ է հասցրել հայկական յեղ. գործին թէ Կովկասում՝ ձերբակալութիւններով և թէ Եւրոպայում ու Եղդիզի պալատում դիւանագիտական ճանապարհներով։ Երդուեալ թշնամի հայկական դատին, այսօր նա կոտորում է իր հպատակներին, որոնք խաղաղ ցոյցերով բողոքում են հէնց իրեն՝ Ցարի՝ չափ ու սահմանը անցած բաշիբօզուկութեան դէմ։ Ո՞ւր օրէնքը, ո՞ւր արդարութիւնը։ Ա՜հ, եթէ այդ սրբութիւնները գոյութիւն ունեն Համիդի՝ Կարմիր Սուլթանի արիւնոտ երկրում, ապա և գոյութիւն կունենան նրա եղբօր՝ Սպիտակ Սուլթանի երկրում։ Արդարութիւնը թշւառ հայը չէ կարող գտնել Արաքսի ո՛չ այս և ո՛չ այն կողմը։ Ազատութեան ձգտող, նրա համար մարտնչող ժողովուրդը միայն կարող է ձեռք բերել նրան...։

Եթէ Համիդը խիստ ծանր հարկերի տակ քամում է ժողովրդի կենսական հիւթը, նոյնը անում է Ցարը. եթէ Համիդը ամենաանխիղճ կերպով հարստահարում է իր հպատակներին՝ նոյնը անում է, աւելի մեծ չափով, Ցարը. եթէ վայրենի Համիդի վայրենի տորոպրեալները կեղեքում են րայաին, Ցարի ռուբերը լիզող չինովնիկներն էլ «նարօտափ» արիւնն են ծծում վամպիրի նման. եթէ Համիդը բռնի կրօնափոխ է անում հայերին, ապա նոյնը աւելի մեծ ծաւալով բոլոր ցեղերի վերաբերմամբ՝ անում է քաղաքակրթուած Արջը. եթէ Սուլթանը իսլամացնում է հայերին, ապա իր եղբայրը ռուսացնում է իր հպատակ բոլոր ազգերին, — Կովկասում՝ մանաւանդ հայերին, — դա նրա պատմական արտասուոր ձգտումն է. եթէ Համիդը խորշում է ազատ մամուլից, ապա Ցարը դողում է Արևմուտքի «յանդգնաւոր» գաղափարներից, «անմիտ ցնորքներից» և ամէն մի ազատ խօսք խեղդւում է նրա թաթերի մէջ, նա գիշերային դողի նման փախչում է լոյսից. եթէ այդ բոլորից յետոյ, ժողովուրդը գիտակցութեան հասած՝ բողոքում է և Կարմիր Սուլթանը արեան գետեր է հոսեցնում, ներկում Հայաստանի դաշտերն ու լեռները բողոքողների արիւնով, ապա նոյնը անում է Սպիտակ Սուլթանը, որը այսօր կարմրելու վրայ է. — յիշեցէք Քիշնեւը իր անմեղ բազմաթիւ զոհերով. եթէ վերջապէս Աբդիւլ Համիդը ուզում է բնաջինջ անել հայութիւնը Հայաստանում, ապա աւելի կատաղութեամբ ու յամառ կերպով Ցարիզմը ճիգեր է թափում ձուլել իր մէջ, ռուսացնել հայութիւնը Արաքսի այս կողմի Հայաստանում։ Զանազանութի՞ւն։ — Ա՛յն, որ մէկը վայրենի բարբարոս է, միւսը քաղաքակրթուած։

Այդ երկու բռնակալների ճիրաններում ճնշուածները առաւել կամ պակաս չափերով ճիգեր են անում, ձգտում են ազատուելու այդ ճիրաններից՝ ընկնելու համար արդարութեան, հաւասարութեան և եղբայրութեան երանելի աշխարհը։ Եւ այդ ձգտման հիմնական, բնական պատճառները ինքը բռնապետութիւնն է իր զզուելի օրէնքներով։ Եկեղեցական կալուածների գրաւումը չէ՛ Կովկասի շարժումների պատճառը և չի էլ կարող լինել։ Բռնակալութիւնն է, այո՛, արմատը, կորիզը, որտեղից բղխում են բոլոր չարիքները և ապա բողոքներ, շարժումներ, կոտորած, պատերազմ՝ նոյն այդ տիրանիան տապալելու, — չարիքը արմատից պոկելու համար։ Թող յետ կենայ Ցարը եկեղեցապատկան կալուածները գրաւելու իր յանդուգն մտադրութիւնից, բայց դրանով յետ չի կենայ և չի էլ կարող այդ անել հայ բանւորը, հարկերի տակ ջարդուած հողագործ գիւղացին, և չեն կարող անզօր լինել բռնութեան դէմ մարտնչող անվեհեր հոգիները։ Ժողովրդական շարժումները իրենց օրէնքներն ունեն, որոնց հիման վրայ էլ առաջ են ընթանում։ Հոգ չէ թէ սևադլուխներ իրենց հետ չեն։ Նրանցից շատ քչերն են պիտանի սոցիալիստական-յեղափոխական շարժումների մեծ Գաղափարին։

Սակայն հեռու չը գնանք։

Ցարի հաւատարիմ շները յօշոտեցին բռնութեան դէմ բողոքելու համար ընկած մարտիկների դիակներ ևս... Դրանք ընկան յանուն արդարութեան և

բռնաբարուած իրաւունքի՝ կըռուելով ուրիշներին շարունակելու այն՝ ինչ նոր էր սկսել...։

Դրանք հարթում են ճանապարհը «Մեծ Գործի, ինչպէս բանաստեղծն է ասում՝

«... Եւ այդ մահերով
Ա՛հ, պիտի լինի անկումը բռնութեան,
Այդպիսի անգին կորուստների գնով
Պէտք է հնչէ փողն մարդկային փրկութեան»։

ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

II.

(Շարունակութիւն եւ վերջ)

Ուրեմն այլ ևս ի՞նչ նիւթական օժանդակութիւնից չը զըրկուելու յոյսով է, որ մենք յետ պիտի մնանք Ռուսաց միապետութեան դէմ եղած շարժումներից։ Մի՞թէ բանւորների, արհեստաւորների և այլն այդ կարգի մարդոց թէև առատաձեռն, բայց ինքն ըստ ինքեան շատ չնչին նուիրատուութիւնների խաթրու։ Սակայն չէ՞ որ Կովկասի հայ բանւորները շատ աւելի մօտիկից շահագրգռուած լինելով ռուս բռնապետական ռէժիմի խորտակման գործում, չեն կարող չմասնակցել այդ ռէժիմի դէմ ըսկըսուած պատերազմին։ Ուրեմն նրանց այդ շարժումներից յետ կասեցնելը միևնոյն է, թէ քամու ջաղացքների հետ կռիւ մըղելը։ Ասացինք՝ բանւորները շահագրգռուած են ռուս միապետութեան խորտակման գործում։ Բայց մի՞թէ բանւորները միայն։ Մի՞թէ բուրժուան պակաս է ճընշւում այդ ռէժիմից։ Մի՞թէ ամեն օր և ամեն ժամ չեն բռնաբարւում բուրժուայի անհատական, քաղաքացիական և ազգային իրաւունքներն ու շահերը։ Մի՞թէ ռուսահպատակ բուրժուան խաղալիք ու գերի չէ դարձած ատմինիստրացիայի ձեռքին։ Ախր ի՞նչ քաղաքացիական և քաղաքական իրաւունքներ ունի բուրժուան, որ նա այդ ռէժիմի պաշտպան հանդիսանայ։ Նա զրկուած է որև է ինիցիատիւայից, կամքից և ազատ կերպով իր կարծիքը յայտնելու իրաւունքից։ Մի ամենաչնչին գործ կամ ձեռնարկութիւն ըսկըսելու համար նա պարտաւոր է հարիւր ու մէկ կառավարչական աստիճանաւորների դիմել ու ամբողջ ամիսներ, երբեմն տարիներ՝ սպասել, մինչև որ թոյլտւութիւն կը ստանայ։ Դրա շնորհիւ նրա արդիւնագործական ու առևտրական գործերը կրիայի քայլերով են յառաջ գնում։ Ռուսաստանի քաղաքները իբր թէ ինքնավարութիւն ունեն. բայց նրանք այնպիսի շրջանակների մէջ են սեղմուած, որ միևնոյն է, թէ այդ ինքնավարութիւնը չը լինէր։ Օրինակի համար, այս կամ այն քաղաքը ցանկանում է ուսումնարան կամ համալսարան բանալ. անհրաժեշտ փողն էլ ինքը քաղաքն է տալիս, բայց եկ տես որ Ցարի կառավարութիւնը այդ „շռայլութիւն" է համարում և թոյլ չի տալիս։ Քաղաքական վարչութիւնը ցանկանում է քարշակ շինել, քաղաքի համար ջուր բերել, ելեքտրականութեամբ լուսաւորել քաղաքը և այլն և այլն այսպիսի տեղական և ընդհանուր պետութեան շահերը չը շօշափող գործեր կատարել, բայց նա իրաւունք չունի առանց ատմինիստրացիայից թոյլտւութիւն ըստանալու։ Այդ դեռ բաւական չէ. այս կամ այն անհատը մտածում է մի որև է բարեգործութիւն անել և իր հաշւով հիւանդանոց կամ անկելանոց բանալ, դարձեալ պէտք է թոյլտւութիւն խնդրել։ Մի խօսքով՝ Ռուսաստանի քաղաքային ատմինիստրացիայի աչքում մի բոլորովին խելքից ու կամքից զուրկ էակ է, որին պէտք է շարունակ ձեռքից բռնած ման ածել ու նրա ամեն մի քայլի համար առանձին թոյլտւութիւն տալ։ Այլ խօսքերով՝ ատմինիստրացիան ամբողջ ժողովրդի դաստիարակն է. նա՛ միայն գիտէ թէ ի՞նչ պէտք է կամ կարելի է մտածել, խօսել ու անել։ Դրանից աւելին՝ կաթոլիկ աշխարհը միմիայն փափի անսխալականութիւնն է ճանաչում, իսկ ռուսահպատակը պարտաւոր է ատմինիստրացիայի ամենավերջին չինովնիկի անսխալականութիւնը ճանաչել։ Եւ այս բոլորից յետոյ ի՞նչպէս կարելի է ասել թէ Կովկասի բուրժուան շահագրգռուած չէ ռուս միապետութեան տապալման գործում։

Ճիշտ է, այսօր ռուս միապետութեան դէմ պատերազմ հրատարակողը բանւոր դասակարգն է, որի տնտեսական ու քաղաքական շահերը շատ կէտերում միանգամայն տարբերւում են բուրժուայիայի շահերից, բայց ո՞ր երկրում է տեսնուած, որ բանւոր դասակարգը յեղափոխութեան աւանգարդը չը լինէ, որ բուրժուազիան իր կուրծքը դէմ տայ կառավարութեան գնդակներին։ Ամեն երկրներում և ամեն տեղ գիտակից և իր շահերը լաւ ճանաչող բուրժուազիան միշտ աջակցել է բանւոր դասակարգի սկսած յեղափոխական շարժումների սկզբնական փազերում, միանգամայն լաւ համոզուած լինելով, որ բանւոր դասակարգը և ոչ մի դէպքում չէ կարող միապետութիւնից սօցիալիստական կազմակերպութեան թռչել։ Մինչև սօցիալիստական կազմակերպութեան հասնելը նրան անհրաժեշտ է մի շարք աստիճաններով անցնել։ Եւ այդ աստիճաններից ամենաառաջինը բռնակալ միապետութեան կաշկանդիչ կապանքները խորտակելն է, որի մէջ, ինչպէս ասացինք, հաւասարապէս շահագրգռուած է և բուրժուան։

Արդ, խնդրի վրայ այս տեսակէտից նայելով, միթէ իրաւունք չունի՞նք հաւատալու, որ Կովկասի հայ բուրժուան, — որը ռուս միապետութիւնից ճնշւում է ոչ միայն իբրև քաղաքացի, այլ և իբրև հայ, որի ազգային բոլոր իրաւունքները միմեանց յետևից յափշտակւում են, „որը ամեն բոպէ անարգւում է և Ռուսաստանում ապրող հրէաների հետ հաւասարւում", — իբրև կրկնակի կերպով շահագրգռուած ռուս միապետութեան տապալման գործում, աւելի մեծ նիւթական աջակցութիւն պիտի անի Կովկասի յեղափոխական շարժումներին, քան նա արեց Թիւրքահայաստանի շարժումներին։ Հետևապէս դրամական կողմից էլ ռուս միապետութեան դէմ սկսուած շարժումներին մասնակցելով, մենք աւելի շահած կը լինենք, քան վնասուած, ինչպէս մտածում են շատ իրենք իրենց յեղափոխական համարող միամիտներ։

Թիֆլիս Թորոս

ՆՄՈՒՇՆԵՐ ՌՈՒՍ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ամբողջ տարաբաղդ Հայ Ազգի բաղդի անիւը դարերից իվեր շրջած լինելով, նոյնիսկ XX-րդ լուսաւոր դարում հայը անդադար հալածւում, հարստահարւում, բռնաբարւում է լինում պարբերաբար՝ ո՛չ միայն բարբարոս ազգերից ու ցեղերից, այլ նոյնիսկ ամենալուսաւորուած քրիստոնեայ ազգերից՝ Եւրոպայից։

„Մերացած, ուժասպառ եղած եզը որ ընկնում է՝ դանակաւորները շատանում են", ասում է ռամկական առածը։ Մեր բազմաչարչար Ազգի համար էլ բոլոր թէ՛ հզօր և թէ՛ մանր մանր ազգերն ու ցեղերը սուր-դանակաւորներ են դառել և անդադար ամեն կողմից իրենց թունաւոր սրերը խրում են „ընկած եզանս կողը, սիրտը...։ Ա՜խ, մի սաղ չը կայ, ո՛չ գալուն քրիստոնեայ տէրութիւն, կամ ո՛չ գալուն քրիստոնեայ պաշտօնեաներ, խեղճուկ հայի ո՞ր յանցանքի համար էք սկսել այդ

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՌԷԿԼԻՒ-ի

թարգմանեց Ֆրանսերէնէ

Ա. Տ-եան

ՀԱՄԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Communisme)

Այս տեսակէտով, անիշխանականներն ալ կը դասաւորուին այն համայնականներուն մէջ, որոնք կուզեն գործադրել՝ «իւրաքանչիւրին իր պէտքերուն համեմատ» բանաձեւը։

Մենք արդէն ապացուցած ենք ուրիշ տեղ որ մեր երկրագունդին արդիւնաբերող բոլոր ույժերը անբաւական են գոհացնելու մարդկային բոլոր պէտքերը. հետեւաբար, պէտք է այս վերջինները չափաւորել, փոխանակ անոնց աճումին նպաստելու։ Որքան ալ հսկայ ըլլայ վայելքի միջոցներուն արտադրութիւնը, պէտքերը աւելի արագ պիտի աճին։ Հակառակ մեքենաներու կատարելագործումին եւ ելեքտրականութեան բազմազիմի գործածութեան, եթէ նոյնիսկ յաջողէինք նուաճել ծովու մակընթացութեան եւ տեղատուութեան շարժիչ ույժը եւ խլել ովկիանոսէն ու մթնոլորտէն անոնց պարունակած սնունդին անհուն քանակութիւնը, պէտքերու աճումը եւ բազմապատկումը զանոնք պիտի գերազանցեն միշտ։ Մարդ որքան ստանայ, միշտ աւելի կուզէ ձեռք ձգել, որովհետեւ փափաքները սահման չեն ճանչնար։ Ստեղծելով նորանոր ախորժակները եւ ուզելով զանոնք գոհացնել, չենք կրնար տեղ մը յանգիլ, որովհետեւ ըսպառելու փափաքը աւելի մեծ պիտի ըլլայ, քան արտադրելու կարողութիւնը եւ վայելքի խթանը աւելի զօրաւոր պիտի ըլլայ, քան աշխատութեան ճաշակը։ Պիտի ըլլան պէտքեր, որոնց յաճախ կարելի չպիտի ըլլայ գոհացում տալ եւ մեր փափաքներէն շատերը չպիտի յագեցնենք։ Ասկէ պիտի ծագի հին անհամաձայնութիւնը՝ «Ինչո՞ւ դուն այս ինչ բանը ունիս եւ ես ոչ։ Ինչո՞ւ քու իղձերուդ անյագ կը կատարուին եւ իմինները՝ ոչ...»։ Իսկ եւ իսկ կռիւը ծնունդ պիտի առնէ տարբեր ձեւերու տակ եւ մեծ սաստկութեամբ մը։

Համայնականները շատ ճիշտ կերպով նախատեսած են այդ առարկութիւնը եւ ատոր համար սահման դրած են փափաքներուն։ Հարստութեան բաժանումը իւրաքանչիւրին պէտքերուն համեմատ տեղի չպիտի ունենայ, «այլ համաձայն այն պէտքերուն, որոնց կարելի է բանաւոր կերպով գոհացում տալ»։ Այն ատեն մէկը կամ բան՝ մը պէտք պիտի ըլլայ հաշուելու եւ կանոնաւորելու ատոնց բաշխումը։

Շատ բնական է որ ես պէտքը զգամ ինքզինքս նուիրելու գեղարուեստի եւ գրականութեան հոյակապ դղեակի մը մէջ, գետի մը եզերքը, ուր յաւիտենական գարուն կը թագաւորէ, շրջապատուած գեղեցիկ արձաններով եւ նկարներով։ Կրնամ փափաքիլ որ կարեմ անցնիլ Միջերկրականը շքեղ զբօսանաւով մը, ճեղքելով ալիքները եւ հանիլ ձիւնազարդ Ալպեաններու գագաթը շքեղազարդ շոգեկառքով։ Եւ եթէ հաճելի ըլլայ ինծ շարունակել այս կեանքը, նուիրուած արուեստի եւ մտաւորական հաճոյքներու, առանց ուրիշ մարդկանց հետ շփում ունենալու, կրնա՞մ ծովերը եւ լեռները բացառապէս ինծի համար ըստեղծուած համարել։ Այս պէտքերը կրնան գոյութիւն ունենալ եւ ատոնք անբանաւոր չեն՝ եթէ բացառապէս եւ անպայման անհատական կանոն մը եւ չափ մը դրուի։ Ինչո՞ւ պիտի վանեն զիս, հեշտասէր համայնականներ, իմ արքայութենէս...։ Մեր պէտքերը պէտք է չափաւորել, որովհետեւ մեր արտադրութիւնը, հակառակ մեր փափաքին, այնչափ մեծ չէ։ Առաջինը (արտադրութիւնը) անդադար պիտի աճի, իսկ փափաքները, աւելի քաղաքակրթուած ընկերութեան մը մէջ, պէտք է գոհանան աւելի համեստ չափով։

(Շարունակելի)

անպատմելի հալածանքը նրան դէմ. չէ՞ որ նոյնիսկ ամենաբարբարոս երկրներում իսկ ընդունուած է պատժել մի՛ այն և միմիա՛յն յանցաւորներին, եղեռնագործներին, աւազակներին և ո՛չ թէ անմեղներին։ Կա՞յ աշխարհումս մի այնպիսի օրէնք, արդարադատութիւն, որը թոյլ տար մեղաւորի տեղ բաղմաթիւ անմեղ մարդիկ ու ընտանիքներ դատապարտելու, բանտարկութեան ենթարկելու, աքսորելու, ընդմիշտ զրկելու նրանց մի կտոր չոր հացից և մանր տաքը փողոցները նետելու՝ հայ մուրալու համար...։ Սակայն ո՞ր օրէնքի համար եմ խօսում այս տեղ. անմեղներին պաշտպանող, իսկ անիրաւներին, աւազակներին պատժող օրէնքները բոլոր քրիստոնեայ և ոչ-քրիստոնեայ երկրներում չէ՞ որ միատեսակ են սահմանուում...։ Ցաւելով պիտի խոստովանենք որ այդ մարդկային-անհատական պատիւն ու իրաւունքները պաշտպանելու կոչուած օրէնքների հեղինակները հէնց իրենք են առաջինը այդ օրէնքները քանդողը, նրանց ոտքի տակ տուողը։ Էլ ո՞ւր կը մնան այն պաշտօնեաները, որոնք նոյն օրէնքների հիման վրայ՝ պիտի կառավարեն ժողովուրդներ, ազգեր...։

Երեկուայ մի ինչ որ վրայի անդրադէտ, կիսավայրենի գիժ Միխակո ատիճանաւորը բաղդի բերմամբ Կարսի ոստիկանապետի բարձր պաշտօնը ստանալով՝ անասելի բարբարոսութիւններ է գործում իւր օգնական կէս թուրք կէս ռուս Նիկոլաևի ճիւաղի հետ։ Այս երկուսը Կարս քաղաքում, իսկ հաղարապետ Լեւիցկին Կարսի շրջանում, համարձակ կարող եմ ասել, հրաշքներ են գործում հայ տարրի վերաբերմամբ...։

Վերոյիշեալ հրէշները օր ու գիշեր մտածում են թէ ի՞նչպէս անեն, ու գրգռեն Բ. Իշխանութիւնը հայերի դէմ և մի գեղեցիկ օր զօրքերը քաշել տան հայ տարրի դէմ՝ բնաջինջ անելու նրան։ Ոստիկանապետը, որպէս լսեցի այսօր ամենահաւատի աղբիւրից, խնդրում է Կարսի զինուորական նահանգապետի միջնորդութիւնը Կովկասի կառավարչապետի առջև՝ բոլոր հայ գաղթականներին Կովկասից քշելու Սիբերիայի խորքերը և կամ, եթէ հնարաւոր է, Ռուսիայի նահանգները՝ ա՛նտեղ կամաց-կամաց ռուսացնելու համար...։ Այդ վայրենի վրացու գիժ խելքով՝ ռուս կառավարութիւնը թերևս միակ ճանապարհը գտած ըլլալով՝ ազատուի տնպայման վնասակար հայ տարրից... Հեռացրեց Կարսի ոստիկանատան բոլոր հայ ըստորին ծառայողներին, իսկ պաշտօնեաներից մի երկուսի դէմ — որոնք իւր մօտը մատնչի դեր չեն կատարում — հալածանք սկսեց, յաչս կառավարութեան կասկածելի ներկայացրեց նրանց... ուրախհետև մի խումբ սոված, անգրագէտ, վրացի աղնուականներ ու իշխաններ են հաւաքուել շուրջը և պաշտօն պահանջում։ Կաշառակերութիւնը վերին աստիճանին է հասել. մի անհնարին համար, օրինակ, եթէ մէկի անցագրի ժամանակը անցել է թէկուզ երկու օր, կամ հետը չէ վերցրել, եթէ այսինչի գլխի մազերը մի քիչ երկար է կամ թէ ակնոց է դնում նա, և կամ եթէ տեսնվում է այնինչը յաճախ իւր ընկերների հետ հայլն, անմիջապէս բանտարկվում է։ Հարուստներից կլորիկ գումարներ շորթելով՝ արձակում են բանտից առաջարկելով անյապաղ հեռանալ քաղաքից, իսկ խե՜ղճ չունեւորներին ամիսներով տանջում բանտերում...

Հմայեակ Դիւմախեան

5 Հոկտ. 1903 թ. Կարս

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

1903, Սեպտ. 18, Թաւրիզ։

Կարդացի «Շարժումի» N-ο 547-ի մէջ Ցոլակ-Սալմաստի ատորագրութեամբ Սալմաստից գրուած մի թղթակցութիւն, որը իւրը թէ հերքում է պ. Հրայրի՝ «Իրաւունքի» 48-դ համարի՝ յօդուածը Սալմաստի հայ ենիչէրիների վերաբերմամբ։ Այդ թղթակցութեան ոգին և բովանդակութիւնը պարզ կերպով յայտնում է ընթերցողին որ պ. Ցոլակի նպատակը ոչ թէ պ. Հրայրի կարծիքների հերքելն է, այլ հնչակեանների և հնչակեանութեան վրայ յարձակում գործելը։

Ինձ չի հետաքրքրում, ոչ պ. Հրայրի և ոչ պ. Ցոլակի կարծիքները ենիչէրիների վերաբերմամբ. ինձ համար հետաքրքրականը պ. Ցոլակի թղթակցութեան երկրորդ մասն է, և այն ոչ թէ այն պատճառով, որ այդ մասում նա աւելի ակնյայտնի կերպով յարձակում է հնչակեանների վրայ — ո՛չ, որովհետև հնչակեան ժայռը միայն արհամարհել գիտէ այդ տեսակ հարուածները, — այլ այն պատճառով՝ որ այդտեղ պ. Ցոլակը կամ դիտաւորութեամբ և կամ մոլեռանդութիւնից կուրացած՝ ուղղակի մատնութիւն է անում, բացարձակ կերպով յայտնելով որ «Սալմաստի մի քանի գիւղեր ամենախիստ կերպով մերժեցին ընդունել հնչակեանութեան ներկայացուցիչ պ. Զիթախեանին, որին Մուրատեանն (թեմիս առաջնորդ) առաջարկում էր իբրև ուսուցիչ և ծածկում էր նրա կուսակցական լինելը, որպէսզի գիւղացիք ընդունեն...»։ Ընթերցողը նկատում է որ այստեղ պ. Զիթախեանը և Մուրատեան Հայր Սուրբը անուններով և պաշտօններով մատնանիշ են արուած իբրև

11

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՒՆ ՄԷՋ

—o—

Եւ որքան ատեն որ Պուլկարիա անհոգ կերպով ինկած է ռուսական ճանկերուն մէջ ու կը խաբուի Բեթրսպուրգէն եւ Վիէնայէն արուած խոստումներով, որքան ատեն որ Եըլտըզի մէջ կը խաղցուի սովորական բարենորոգչական կատակերգութիւնը՝ կանոնագիրներ եւ իրատէներ գրելով, որքան ատեն որ Զինովիէվ եւ Գալիչէ նոյնիսկ օր մը չեն անցուներ առանց շընորհաւորելու Սուլթանը իր «տենդային գործունէութեան» համար — մենք կը տեսնենք միւս կողմէ որ Թուրքիա ամէն օր կը դիմէ զինուած զօրքեր, պաշիպօզուքներ, լրտեսներ՝ ամբողջ Մակեդոնիոյ մէջ եւ Պուլկարիոյ սահմանագլխին վրայ, կը յափշտակէ մերկ ժողովուրդէն տաւար եւ ուտելիք, կը հաւաքէ հրացաններ ու զէնքեր, կը շինէ ճամբաներ եւ պատնէշներ... որպէսզի օրին մէկը Բեթրսպուրգէն եւ Վիէնայէն արուած նըշանի մը վրայ նետուի հարստահարուած ու անկէն մակեդոնացի ժողովուրդին վրայ, չարդէ ու յափշտակէ ամէն բան ու այնուհետեւ Պուլկարիոյ վրայ կը յարձակի. իր այս մեծ քաջագործութեան համար Սուլթանը պիտի ունենայ իբր հաւատարիմ օգնականներ՝ վայրենի առնաւուտները եւ Ցունաստանը։ *)

*) Ցունաստանի մէջ ամէն օր մի-թիկներ կը գումարուին պուլկարներուն դէմ։ Այս չովինիստական կազմակերպութեան պարագլուխներն են՝ Աթէնքի համալսարանին տնօրէնը, ուսանողներն ու բոլոր քաղաքական կուսակցութիւնները։ Աթէնքի մէջ քանի մը յոյն ուսանողներ իբր կամաւոր զինուոր գրուած են թուրք բանակին։

Մինչ Թուրքիա այս կերպով Ռուսիոյ եւ Աւստրիոյ «բարենորոգումները» կը գործադրէ, ռուսական գործակալները Պուլկարիոյ մէջ, որոնք պուլկարական նախարարներ անունը կը կրեն, Ռուսիոյ եւ Աւստրիոյ հրամանին համաձայն, կը լուծեն մակեդոնական կազմակերպութիւնը, 200,000 ֆրանք կը յատկացնեն թրքական սահմանագլխի պահպանութեան համար, հրացաններ եւ արնամիթ կը գրաւեն, (confisquer) շրջաբերականներ եւ նամակներ կուղղեն Մակեդոնիոյ պուլկար հիւպատոսներուն եւ առաջնորդներուն, որպէսզի ժողովուրդը խաղաղութեան եւ հնազանդութեան հրաւիրեն. եւ այդպիսով կարելութիւն տուին Սուլթանին «ամբողջապէս գործադրելու բարենորոգումները»...։

Էն վերջը, այդ նոր նախարարներուն այսօր կը պզտան Բեթրսպուրգէն եւ Վիէնայէն. «Դուք պէտք է հանդարտ կենաք, ամէն բան մենք յուսայէք. եթէ պէտք ըլլայ՝ մեզի օգնութեան կանչեցէք»։ Իսկ անոնք հլու կերպով կը հնազանդին եւ չեն կրնար իրենց զարմանքը չյայտնել մեր «փըրկարարին» այս «մեծահոգութեան» համար։ «Ի՞նչ, Ռուսիա մեզի օգնութեա՞ն պիտի ղրկէ իր քաղաքները։ Մինթ Պուլկարիոյ համար ասկէ աւելի մեծ երջանկութիւն կրնա՞յ ըլլալ», կը գոչեն մեր ռուսասէրները։ Միեւնոյն խրատները Պէլկրատի ալ կը տուին։

Այսօր ամէն ինչ այլ եւս պատրաստ է։ Միայն նշան մը պէտք է որ ռուս-աւստրիական «բարենորոգումները» արեան եւ արցունքի մէջ խեղդեն ամբողջ Մակեդոնիան եւ Պուլկարիան։ Այս անհելի աղէտին առջեւ զգացած սոսկումէն շուարած՝ խեղճ Պուլկարիան աւելի ու աւելի զօրաւոր կերպով կը սեղմուի իր «պաշտպանին» բազուկներուն մէջ եւ «օգնութիւն» կաղերսէ...։

Այսպէս, ռուս-աւստրիական դիւանագիտութիւնը՝ կաշառքներով եւ խոստումներով, ինթրիկներով եւ խառնակչութիւններով, թոյնով եւ սուրով պիտի յաջողի վերջապէս հետզհետէ ոչնչացնել բոլոր պալքանեան պետութիւնները՝ մէկը միւսին միջոցաւ եւ ընել զանոնք կամուրջ իր արիւնոտ ճամբուն համար դէպի Կ. Պոլիս եւ Սելանիկ։ *)

*) 1885-ին, Սերպիա՝ Ռուսիոյ եւ Աւստրիոյ թելադրութեամբ՝ յարձակեցաւ Պուլկարիոյ վրայ, որպէսզի ստիպէ այս վերջինը Սուլթանին վերադարձնել Թուրքիային յափշտակուած նահանգը (Հ. Պ)։ 1897-ին Պուլկարիա եւ Սերպիա, Բեթրսպուրգի եւ Վիէնայի թելադրութեամբ, թոյլատրեցին որ Թուրքիա ոչնչացնէ Ցունաստանը եւ հարկադրէ զայն անագին պատերազմական տուգանքներ վճարելու։ 1900-ին, Ռումանիա, միեւնոյն պետութիւններու խորհրդով, պատրաստ էր հիմնայատակ ընել Պուլկարիան՝ Ռուսիան եւ Սուլթանը սոսկացնող մակեդոնական քոմիթէները ջնջելու համար։ Վերջապէս, այսօր Ցունաստան միեւնոյն այդ նենգամիտ դիւանագիտութենէն դրդուած՝ պատրաստ է կռուելու տաճկական եւ ալպանական

Այսպէս, ան տակն ու վրայ բրաւ եւ գրաւեց Բոլսնիան, Ցիրնիսթանան եւայլն, այսպէս պիտի գրաւէ նաեւ Պալքանեան թերակղզին։

Արդեօք պիտի խուսափի՞ Պուլկարիա այս անգամ ալ սարսափելի աղէտէն. — ասիկա կախում ունի շատ մը պայմաններէ։ Առաջին, արդեօք Ռուսիա եւ Աւստրիա պիտի յաջողի՞ն միայն Թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ ծագելիք պատերազմին առաջքը առնել. հակառակ պարագային ընդհանուր եւրոպական պատերազմէ մը վախնալով, չպիտի թոյլատրեն այսպիսի պատերազմ մը, այլ պիտի գոհանան միմիայն Մակեդոնիան սպանդանոցի վերածելով. երկրորդ, արդեօք մակեդոնացի ժողովուրդը՝ իրեն համար պատրաստուող նենգամիտ թակարդը տեսնելով՝ պիտի կրնա՞յ յաստատել իր յեղափոխութիւնը աւելի նպաստաւոր վայրկեանի մը եւ կամ թէ Թուրք զօրքերը պիտի ստիպո՞ւին զէնքը ձեռք առնելու։ Ամենէն վերջը, արդեօք Անգղիա՞ եւ Ֆրանսա պիտի յաջողի՞ն ամէն տեսակ աղէտներու առաջքը առնել, եւայլն։

Այսպէս, ան տակն ու վրայ բրաւ եւ գրաւեց Բոլսնիան, Ցիրնիսթանան եւայլն, այսպէս պիտի գրաւէ նաեւ Պալքանեան թերակղզին։

Արդեօք պիտի խուսափի՞ Պուլկարիա այս անգամ ալ սարսափելի աղէտէն. — ասիկա կախում ունի շատ մը պայմաններէ։ Առաջին, արդեօք Ռուսիա եւ Աւստրիա պիտի յաջողի՞ն միայն Թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ ծագելիք պատերազմին առաջքը առնել. հակառակ պարագային ընդհանուր եւրոպական պատերազմէ մը վախնալով, չպիտի թոյլատրեն այսպիսի պատերազմ մը, այլ պիտի գոհանան միմիայն Մակեդոնիան սպանդանոցի վերածելով. երկրորդ, արդեօք մակեդոնացի ժողովուրդը՝ իրեն համար պատրաստուող նենգամիտ թակարդը տեսնելով՝ պիտի կրնա՞յ յաստատել իր յեղափոխութիւնը աւելի նպաստաւոր վայրկեանի մը եւ կամ թէ Թուրք զօրքերը պիտի ստիպո՞ւին զէնքը ձեռք առնելու։ Ամենէն վերջը, արդեօք Անգղիա՞ եւ Ֆրանսա պիտի յաջողի՞ն ամէն տեսակ աղէտներու առաջքը առնել, եւայլն։

վայրենի խումբերու հետ միասին Պուլկարիոյ եւ Մակեդոնիոյ դէմ. նոյնիսկ Մակեդոնիոյ եւ Եանեայի մէջ գտնուող իր գերի հայրենակիցներուն դէմ, եթէ անոնք ալ ապստամբին պուլկար ժողովրդին հետ։ Խե՜ղճ պալքանեան պետութիւններ, ինչպէ՞ս արդարաբար, մէկը միւսէն յետոյ կը կորսնցնեն իրենց խելքը, որպէսզի պլուխնին ալ կորսնցնեն... էն վերջը։

թարգ. Շահպազ

Շարունակելի

„ցեղափոխականները, իբրև հնչակեանները։ Ուրիշ ի՞նչ անուն տանք այս արարմունքին, եթէ ոչ՝ մատնութիւն։

Պ. Ցոլա՛կ, կամ խոստովանեցէք որ այնքան տգէտ էք, որ չգիտէք թէ Պարսկաստանը եւրոպական մի ազատ պետութիւն չէ, կամ ընդունեցէք որ կուսակցական ֆանատիկոսութեան կիրքը ձեզ կուրացրել է մատնութիւն անելու չափ։ Ի՞նչ անուն կը տայիք մեզ եթէ մենք վերցնէինք ձեր և ձերոնց իսկական անունները և քննադատէինք որպէս կուսակցական անձնաւորութիւններ։

Խօսք եմ ուղղում նաև «Շարժումիս» պ. խմբագրին։ Պ. Վարդո՛, դուք ևս նոյնն էք ինչ որ ձեր ցոլականման թղթակիցները, ո՛չ աւել, ո՛չ պակաս։ Սա երկրորդ անգամն է, որ դուք տեղ էք տալիս այնպիսի թղթակցութեան, որի մէջ հնչակեաններ են մատնանիշած անուններով և պաշտօններով։ Ցիշո՞ւմ էք «Մաքսատուն և ընկերութիւն» յօդուածը «Շարժումիս» մէջ։ յիշեցէ՛ք և կարմրեցէ՛ք՝ եթէ ընդունակ էք կարմրելու։

Սրահ.

«ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ»... ՎԱՐԴՕԻ ԳԷՂՈՒՆ ՄԷՋ։

II

Անցեալ անգամ խոստացանք ուրուագծել մեր յարաբերութիւնները դէպի անիշխանականութիւնը։

Անիշխանականութիւնը՝ արտայայտուած իր ծայրահեղ ձևի տակ, հասարակական չարիք մըն է, որ արդի հրէշային ընկերական դրութեան արդիւնքն է։ Անիշխանականութեան մասին, — այս ձևի տակ — կրնայ ըսուիլ այն ինչ որ միւս ոճրագործութիւններու մասին, օր.՝ գողութիւն, մարդասպանութիւն ևայլն, որոնք պիտի անհետանան մանաւոր սեփականութեան ոչնչացումովը։ Արդի ընկերութիւնը, որ այնքան անխղճօրէն կը ծաղրէ մարդկային բնութիւնն ու արժանապատուութիւնը, ամենէն յուսահատ ոճրագործները ծնելու վիճակին՝ մէջ կը դրուի։ Այս արձագանգը, որ ազատ ասպարէզ կուտայ անասնային կրքերու ու ստոր միտումներու, անիշխանականութիւնն է — «գործով բրօբականտան» (propagande par le fait)։ Այս է անիշխանականութիւնը իր ծայրահեղ ձևի տակ։

Բայց անիկա միևնոյն ատեն հասարակական վարդապետութիւն մըն է։ Անիշխանականութեան տնտեսական կողմը՝ արդիւնագործական ամեն տեսակ կազմակերպութիւն ժխտելու մէջ կը կայանայ։ Անիշխանականները կը պահանջեն որ բացարձակ ազատութիւն տրուի անհատին, անոր փափաքներուն, կրքերուն ու ընազդներուն։ Ասոր համար, մենք, սոցիալիստներս, անիշխանականութիւնը կը համարենք իբր ծայրահեղ զարգացում պուրժուազական անհատա-եսատիրական վարդապետութիւններու։

Անիշխանականները հակառակ են նաև ամէն տեսակ պետութեան, ամէն տեսակ գրուած օրէնքներու ու պաշտօնական տէրութեան։

Ուրեմն այն ատեն ինչպէ՞ս պիտի զեկավարուի հասարակութիւնը։ Շատ պարզ, կը պատասխանեն։ Ինչպէս որ մարմնի մը մասնիկներուն միջև գոյութիւն ունի բնական նմանութիւն մը (affinité) առանց արտաքին միջամտութեան, նոյնպէս մարդոց միջև ալ գոյութիւն ունի այս օրինակ նմանութիւն մը։ Բայց այս նմանութեան, այս բնական համերաշխութեան արտայայտումը կը խափանուի արդի հասարակական պայմաններէն։ Վերցուցէք այս պայմանները և ատով պիտի կոտրէք այն կեղևը, որ պարփակած է երկրային երջանկութեան ու սիրոյ աղբիւրը։*)

Անիշխանականներու այս «թէօրիան» ուրիշ բան չէ, բայց եթէ սնամէջ ֆրազ մը, արդիւնք իսկապէս անիշխանական սանձարձակ երևակայութեան։ Քիմիական ու մարդկային նմանութեան որոշ նշանակութիւն վերագրելու համար, անիշխանականները նախապէս պէտք է ապացուցանեն թէ մարդկային հասարակութիւններու կազմութիւնը կը կատարուի քիմիական միութիւններու նման։ Սակայն անոնց ճամբան նոյնիսկ սկիզբէն ընդմիջուած է։ Եւ իրօք, մինչդեռ քիմիական նմանութեան այս օրէնքը անփոփոխ ու հաւատարիմ մնացած է ամէն պայմաններու մէջ և մենք կրնանք զայն նկատել ուր որ ալ ըլլայ, — ընդհակառակը, մարդկային հասարակութեան մէջ տեղ մը չենք տեսնար այս նմանութիւնը. ասկէ զատ հոն կը նկատուի դասակարգային կռիւներու ներկայութիւնը։

Ահա համառօտ կերպով անիշխանական վարդապետութեան ամփոփումը։ Պ. Վարդօն զայն սոցիալիզմի վարդապետութեան կը հակադրէ։ Առանց քննելու թէ այս հակադրութիւնը որքան մակերևութական է, մենք միայն պիտի աւելցնենք որ պ. Վարդօն համակրելու լաւ ու յարմար վարդապետութիւն գտած է, որովհետև ինքն ալ անիշխանականներէ վար չի մնար, միմիայն սա տարբերութեամբ որ անոնք իսկական անիշխականներ են, մինչդեռ պ. Վարդօին «անիշխանութիւնը» կը սահմանափակուի... միայն անոր գլխուն մէջ։

S. Boräts

*) Անիշխանականութեան աւելի մանրամասնօրէն ծանօթանալու համար, մենք կը յանձնարարենք պ. Վարդօին կարդալ «Վերածնութիւն»ի մէջ Ա. Տ. Հանէ թարգմանուած «Անիշխանութիւնը» յօդուածը, ուր ապահովապէս աւելի յստակօրէն պիտի տեսնայ իր «անիշխանական» մտքին ցոլացումը։

S. B.

ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԲԷԿԻ ՎՐԱՅ

Վերջապէս ա՛յն՝ ինչ որ մեր բուն թշնամին տարիներէ ի վեր ըղձալով չէր կրնար կատարել, Հնչակեանութեան, — կամ աւելի լաւ է ըսել՝ Ցեղափոխութեան, — երդուեալ թշնամիները յաջողեցան գլուխ բերել՝ խլել ուզելով. կեանքը ա՛յն անձին, որ Հայկ. Ցեղափոխութեան է՛ն նշանաւոր դէմքերէն մին և Ցեղ. Գործին գլխաւոր ապրակը եղած է։

Մեր բուռն արհամարհանքը յայտնելով այդ արիւնարբու վամպիրներուն՝ աւելորդ չենք սեպեր նոյնպէս կարդ մը թղուկներու կրկռոցներուն մեր յաւիտենական անարդանքը նուիրելու։ Այս ճիւաղային արարմունքի առթիւ Վառնայի իրաւաբաբառ փալասի անուղղայ խմբագիրը իր զառանցանքները քշել ուզելով անգոյ ենթադրութիւններ ընելու եղած է։

Մինչդամ ընդ միշտ կը յայտարարենք թէ Հնչակեան Կուսակցութեան մէջ Դաղափարի տարբեր հոսանքներ գոյութիւն չունին և ատոնք ծնունդ են միայն փալասի գրչակին հիւանդ երևակայութեանը։

Մենք, որ արհամարհած ենք միշտ այդ հրապարակագիր-խրատուիլակը՝ իր ստոր ընթացքին համար, այս անգամ ալ, իր ոճրագործ բարեկամներուն փաստաբանութիւնը ստանձնելուն առթիւ, կը յայտնենք իրեն մեր պժգանքը և կը հրաւիրենք զինքը որ ինչպէս անպատկառօրէն կը ղրպարտէ՝ մեր թանկագին ընկերին բոլոր համակրողներուն — կամ՝ որ նոյնն է հնչ. Կուսակցութեան, — վերագրելով այդ ըսպանութեան գործը, այնպէս ալ թո՛ղ հերքէ և կամ հաստատէ իր ըսածները։ Հակառակ պարագային, պատասխանատուներէն մէկը պիտի ճանչնանք զինքը այն ներքուստ փայփայած ոճիրին, որուն հեղինակները գգուելէ չի դադրիր՝ իբր անոնց վարձկան փաստաբանը։

* * *

Իսկ՝ մեր բոլոր այն համակիրներուն, բարեկամներուն և ընկերներուն, որոնք իրենց ցաւակցութիւնը յայտնելով հանդերձ անձկութեամբ լուրի կըսպասէին մեր ընկերոջ առողջութեանը մասին, կը յայտնենք թէ՝ մեր ստացած վերջին տեղեկութիւններու համեմատ՝ բարեբաղդաբար վրայ է անոր վիճակը և մէկ քանի օրէն ոտքի կելլայ ան։

Աւելորդ չենք սեպեր հոս քանի մը մանրամասնութիւններ աւելցնել այդ հրէշային արարքի մասին։

Ոպանութեան փորձը կատարուած է կիրակի գիշեր, ժամը 11ի առենները՝ միջահասակ և թխագոյն անձի մը կողմէ։ Ոճրագործը, որ քանիցս յարձակում գործած է մեր սիրելի ընկերոջ վրայ՝ յաջողած է միայն անոր ուսին և ճակտին դաշոյնի երկու հարուած իջեցնել և ապա փախչիլ։

ՔՐՕՆԻԿ

Ռուսիա և Աւստրիա՝ վերջապէս ներկայացուցին Սուլթանին Մակեդոնիոյ համար մշակուած նոր «Բարենորոգումներու» ծրագիրը, որուն մէջ նշանակելի կէտը սա է որ, մակեդոնացի յեղափոխականներու պահանջին համեմատ, յիշեալ երկու տէրութիւնները եւրոպական քոնթրոլի պէտքը զգացած են։ Այդ քոնթրոլը — ծրագրին մէջ նշանակուած եղանակով, — թէև գործնական արդիւնք մը տալու հաւանականութիւնը չի ներկայացներ, բայց այդ սկզբունքին ընդունուիլը յաղթանակ մը և մասնակի յաջողութիւն մըն է մակեդոնացի յեղափոխականներու համար։ Բնատարակոյս չկայ որ եթէ այս վերջինները գիտնան մինչև վերջը անվհատ ու անյողդողդ վարել իրենց ստանձնած սրբազան գործը, Եւրոպան կամայ ակամայ մակեդոնացի ժողովրդին պահանջներուն լիովին գոհացում տալու հարկին տակ պիտի գտնուի։

— Յառաջիկայ կիրակի տեղի պիտի ունենայ Սոպրանիէի ընտրութիւնները։ Ընտրական պայքարը իր ամենէն կատաղի շրջանին մէջ կը գտնուի։ Կուսակցական կիրքերը այնքան յուզուած և սաստկացած են որ դեռ այժմէն սպանութեանց և կռիւներու նորնոր դէպքեր տեղի կունենան շատ մը քաղաքներու մէջ։ Սթամպոլովիզմը՝ վերակենդանանալու համար՝ ամէն տեսակ դատապարտելի միջոցներու կը դիմէ և շատ հաւանական է որ ընտրողներու վրայ գործ դրուած թէրօրին շնորհիւ՝ յաջողի ան մեծամասնութիւն շահիլ։

Սրահ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ահրիկան. — Շատոնց ստացած ենք ձեր «Դարնանային մեղեդիներ» (Մաքսիմ Գորկիի) թարգմանութիւնը։ Պիտի հրատարակենք յառաջիկային։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печатница Б. Н. Малджиевъ — Русе